

Հարգելի քաղաքացիներ

Հաշվի առնելով, որ Հայաստանի քաղաքացիները հաճախ առիթ են ունենում բուժում ստանալու արտերկրում, որից հետո իրենց գործատուին են ներկայացնում օտարերկրյա պետությունների կողմից տրված բժշկական փաստաթղթեր, առողջապահության նախարարությունն անհրաժեշտ է համարում ևս մեկ անգամ հիշեցնել վերոհիշյալ փաստաթղթերի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամանակավոր անաշխատունակության թերթիկի տրման կարգը:

Համաձայն «ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի թիվ 1024-Ն որոշման, օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի (ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը հաստատող այլ փաստաթղթի) (այսուհետ՝ բժշկական փաստաթուղթ) հիման վրա քաղաքացուն տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամանակավոր անաշխատունակության թերթիկ (այսուհետ՝ անաշխատունակության թերթիկ): Գործընթացն իրականացվում է վերոհիշյալ որոշմամբ սահմանված կարգով, հետևյալ հերթականությամբ.

1. քաղաքացին առողջապահության նախարարություն է ներկայացնում հյուպատոսական վավերացմամբ, իսկ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքում՝ ապոստիլի հիման վրա վավերացված բժշկական փաստաթուղթը և դրա նոտարական կամ հյուպատոսական կարգով վավերացված թարգմանությունը: Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրների բժշկական հաստատության տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկն առանց զինանշանի պատկերով կնիքի լինելու դեպքում առողջապահության նախարարությունը բժշկական փաստաթղթերի իսկությունը և համապատասխանությունը պարզում է գրավոր հարցումով՝ հարցում կատարելու վերաբերյալ առողջապահության նախարարությանը դիմումատուի տված՝ նոտարի վավերացրած լիազորագրի հիման վրա:

2. առողջապահության նախարարությունը ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ 1-ին կետում նշված հարցմանն ի պատասխան՝ Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրի բժշկական հաստատությունից բժշկական փաստաթղթերի իսկությունը և համապատասխանությունը հավաստող փաստաթղթի) հիման վրա տալիս է քաղաքացուն անաշխատունակության թերթիկ տրամադրելու մասին գրավոր թույլտվություն:
3. Քաղաքացուն առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունը, առողջապահության նախարարության գրավոր թույլտվության հիման վրա, անձին տրամադրում է անաշխատունակության թերթիկ:

Պետք է նշել, որ 04.06.1996թ «Վրաստանի և Հայաստանի Հանրապետության միջև քաղաքացիական գործերով իրավական օգնության պայմանագրի» համաձայն, «Պայմանավորվող Կողմերից որևէ մեկի տարածքում կազմված պաշտոնական փաստաթղթերը ազատվում են օրինականացումից կամ համանման այլ ձևականություններից, երբ անհրաժեշտ է դրանք ներկայացնել մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում»:

Ուստի, հենվելով 22.01.1993թ. ընդունված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիայի» վրա՝ «Փաստաթղթերը (կոնկրետ դեպքում՝ անաշխատունակության թերթիկները), որոնք Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում պատրաստվել կամ վավերացվել են մարմնի կամ հատուկ դրա համար լիազորված անձի կողմից՝ իրենց իրավասությունների շրջանակներում ու սահմանված ձևով, և ամրագրված են զինանշանային կնիքով, մյուս Պայմանավորվող կողմերի տարածքներում ընդունվում են առանց որևէ հատուկ հավաստագրի»:

Վերոհիշյալ գործընթացը պատշաճ և առանց ավելորդ դժվարությունների իրականացնելու համար առողջապահության նախարարությունը պացիենտներին խորհուրդ է տալիս մինչև արտերկիր մեկնելը խորհրդակցել ԱՆ բժշկական օգնության քաղաքականության վարչության մասնագետների հետ, հեռ. 060 80 80 03 (1211, 1212, 1213, 1214, 1217):